ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,094456283

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» սեպտեմբերի 2021 թվականի N 17

« ԱԲԲ ՊՐՈՅԵԿՏ » ՍՊԸ-ԻՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով,ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ենթակետով,հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «ԱԲԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ ՆԼ-640 լեռնահատկացման ակտը և Քարաբերդ համայնքի ավագանու 25 սեպտեմբերի 2021 թվականի թիվ 9 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԱԲԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով մինչև 23.03.2030թ., առանց մրցույթի տրամադրել Քարաբերդ համայնքի Հանքագործների 3 հասցեում գտնվող 2.8277 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 06-108-0105-0010 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ընդերքօգտագործման նպատակով:
2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 800000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. «ԱԲԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքների պետական գրանցումը իրականացնել «ԱԲԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

Համայնքի ղեկավար Գուրիկ Շավեյյան

25 սեպտեմբերի 2021թ.
Գ. Քարաբերդ